ԻՎԱՆ ՂԱԼԱՄՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՋՈՒԹԱԿ ՆՎԱԳԵԼՈՒ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ»

ՍԱՐԳՍՅԱՆ Ն.Մ.

Գործիքային կատարողական արվեստներին վերաբերող ուսում-նասիրությունների մեջ ջութակի մեթոդների մասին գրականությունը թերևս ամենահարուստ պատմությունն ունի: Սա բացատրվում է ջութակի՝ որպես մենակատար գործիքի դարավոր ավանդույթներով: Ջութակի կատարողական արվեստին վերաբերող առաջին գրքերից է Լեոպոլդ Մոցարտի «Ջութակի հիմնարար դպրոցի փորձը»[1], որը հրատարակվել է դեռևս 1756 թ. (Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի ծննդյան տարում): Այս աշխատությունը մինչև այժմ լայն տարածում ունի ջութակահարների շրջանում և, բացի եզակի պատմական արժեք լինելուց, արդիական է նաև ջութակի տեխնիկայի տեսության առումով:

Հետագա ժամանակաշրջանում ևս ջութակի տեխնիկային վերաբերող մի շարք արժեքավոր գրքեր են գրվել (Ֆրանչեսկո Ջեմինիանի[2], Լուի Շպոր[3], Պիեռ Բայո[4], Շարլ Բերիո[5], Ֆերդինանդ Դավիդ[6] և այլք):

XX դ. հրատարակված գրքերից առանձնապես մեծ տարածում ունեն Լեոպոլդ Աուերի («Ջութակ նվագելը, ինչպես ես սովորեցնում եմ»)[7] և Կարլ Ֆլեշի («Ջութակ նվագելու արվեստը»)[8] աշխատությունները:

Նախորդ դարի՝ ջութակ նվագելու մեթոդների մասին գրված ամե-նանշանավոր գործերից է նաև հայազգի լեգենդար ջութակահար, մանկավարժ և մեթոդաբան Իվան Ղալամյանի «Ջութակ նվագելու և դասավանդելու սկզբունքները»[9]:

Իվան Ղալամյանը ծնվել է Թավրիզում 1903 թ. և մանուկ հասակում տեղափոխվել Մոսկվա: 1916 թ. նա ընդունվում է Մոսկվայի ֆիլհարմոնիկ դպրոց՝ աշակերտելով հայտնի մանկավարժ Կոնստանտին Մոստրասին: 1919 թ., ավարտելով Մոստրասի դասարանը, ընդունվում է հռչակավոր Մեծ թատրոնի նվագախումբ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո երիտասարդ Ղալամյանը ստիպված է լինում հեռանալ Ռուսաստանից և 1922 թ. անցնում է Փարիզ, որտեղ աշակերտում է ֆրանսիական դպրոցի մեծանուն

---

[1] **Mozart L.** *Versuch Einer GrƆndlichen Violinschule, Augsburg, 1756.*

[2] **Geminiani F**. *The Art of Playing on the Violin, London, 1751.*

[3] **Spohr L.** *Violinschule, Wien, 1832.*

[4] **Baillot P**. *L'art du violon, Paris, 1834.*

[5] **Bnriot C. A.** *Mƞthode de violon. , Paris, 1858.*

[6] **Ferdinand D**. *Violinschule., Leipzig, 1867.*

[7] **Auer L.** *Violin Playing as I teach it, New York, 1921.*

[8] **Flesch C.** *Die Kunst des Violinspiels (2 volumes), Berlin, 1923–1928.*

[9] **Galamian I.** *Principles of Violin Playing and Teaching, New York, 1962.*

մանկավարժ Լյուսիեն Կապեին: Վերջինս ջութակի ֆրանսիական դպրոցի տիպիկ ներկայացուցիչ էր և առավելապես հայտնի էր աղեղնային տեխնիկային վերաբերող իր մեթոդներով:

1924 թ. Ղալամյանը ավարտում է Փարիզի կոնսերվատորիան և մի քանի տարի հանդես գալիս որպես մենակատար: Սակայն, մանկուց հակված լինելով մանկավարժությանը, շուտով թողնում է ջութակահարի կարիերան և լիովին նվիրվում դասավանդելու գործին: Իր մանկավարժական բնածին տաղանդի և աշխատասիրության շնորհիվ արդեն երեսունականների սկզբին Փարիզում ձեռք է բերում մանկավարժական համբավ: Քննադատները նրան համարում էին □կախարդական մանկավարժ□, որի ղեկավարությամբ աշակերտները ամենակարճ ժամանակում բացառիկ հաջողության էին հասնում:

1937 թ. Ղալամյանը տեղափոխվում է ԱՄՆ և շարունակում իր մանկավարժական գործունեությունը՝ դառնալով ջութակի պատմության մեջ երբևէ ամենամեծ հաջողությունը գրանցած մանկավարժներից մեկը: 1944 թ. նա աշխատանքի է անցնում Կուրտիսի երաժշտական ինստիտուտում, իսկ 1946-ին՝ Ջուլիարդի դպրոցում՝ հետագայում դառնալով այս դպրոցի ջութակի բաժնի ղեկավարը:

1944 թ. Նյու Յորքից հյուսիս գտնվող անտառապատ վայրում Ղալամյանը հիմնում է «Մեդոումաունթ» (անգլ.՝ «Meadowmount». meadow – մարգագետին, mount - լեռ) կոչվող ամառային երաժշտական դպրոցը, որտեղ ամեն ամառ իր աշակերտների հետ լարված գրաֆիկով դասընթացներ է կազմակերպում: Ղալամյանի հռչակի հետ մեկտեղ կարճ ժամանակում մեծ հռչակ է ձեռք բերում նաև Մեդոումաունթի դպրոցը և հետագա տարիներին այստեղ կրթություն են ստանում ապագա մեծանուն երաժիշտներ Մայքլ Ռաբինը, Պինկաս Յուկերմանը, Իցհակ Պերլմանը, Յո-Յո Ման և այլք:

Ղալամյանը ջութակի կատարողական արվեստի մեջ ոչ միայն նոր դպրոցի հիմնադիր էր, այլև, ըստ էության, ջութակի դասավանդման նոր դարաշրջան սկզբնավորող մանկավարժ: Ղալամյան-մանկավարժի հաջողությունն այնքան շռնդալից էր, որ դեռևս իր կյանքի օրոք նրա անունը առասպել էր դարձել: Նրա մանկավարժական բացառիկ հաջողությունները գրավում էին ոչ միայն երիտասարդ ջութակահարների, որոնք ձգտում էին միջազգային կարիերայի, այլև արդեն կարիերայի գագաթնակետում գտնվող ջութակահարների և անվանի երաժիշտների: Բազմաթիվ մանկավարժներ իրենց լավագույն ուսանողներին ուղարկում էին Ղալամյանի մոտ կատարելագործվելու: գործընկերները նրան անվանում էին «լեգենդ» և «հրաշագործ», որը կարող էր ոչնչից ջութակահարներ ստեղծել:

Ինչպես սովորաբար պատահում է, Ղալամյանի հռչակը տարածվում էր, առաջին հերթին, նրա մենակատար ուսանողների շնորհիվ, որոնք աչքի էին ընկնում իրենց կատարման տեխնիկական կատարելությամբ և երաժշտական մեկնաբանության նրբություններով: Տեխնիկական կողմը հավասարապես վերաբերում էր թե՛ նվագի տեխնիկական թեթևությանը, թե՛ «ղալամյանական» ձայնի որակին:

Ղալամյանի աշակերտներից Ռոյ Մալանը (Սան Ֆրանցիսկոյի բալետի և Կալիֆորնիայի սիմֆոնիկ նվագախմբի կոնցերտմայստեր) գրում է. «Երբ ինչ-որ մեկը լսում է որևէ տիպիկ ժամանակակից ջութակահար աստղի կատարում, այդ հիանալի, մաքուր ձայնն ուղղակիորեն վերագրվում է միայն երկու մարդու՝ Յաշա Հայֆեց և Իվան Ղալամյան: Մինչ Հայֆեցը լուսավորում էր կատարելության բոցավառվող փարոսը, Ղալամյանն ի վիճակի էր դա անելու փայլի հետևում մեխանիկայի խորաթափանց ըմբռնմամբ՝ տեղավորելով այն սովորական մահկանացուների մտահորիզոնի սահմաններում»[10]:

Ինքը՝ Ղալամյանը, այսպես էր նկարագրում իր մանկավարժությունը. «Իմ դասավանդման սկզբունքը բացակայությունն է ամենայն սկզբունքների, կամ, ավելի շուտ, թույլ տվեք ասել, ես ճանաչում եմ հետևյալ բանաձևի խորքային ճշմարտությունը՝ «բարեխղճություն, իմացություն և համբերություն», և ես փորձում եմ, որքան հնարավոր է, լավ կիրառել այն: Յուրաքանչյուր աշակերտի հետ այս ընդհանուր սկզբունքը կամ, այսպես ասած՝ առաջնորդող թեման, ենթակա է անսահման փոփոխությունների: Այլ կերպ ասած՝ ես փորձում եմ խորապես հարգել յուրաքանչյուր ուսանողի անհատական տաղանդը, որը, ըստ իս, ուսանողին ճշմարիտ արվեստ բերելու միակ հուսալի ճանապարհն է՝ առանց խեղաթյուրելու նրա տաղանդի էությունը: ... Ես փորձում եմ երեխայի մեջ ծարավ ներարկել դեպի կատարելությունը և հույս՝ այդ ամենին հասնելու համար: Միգուցե պատճառը, որ իմ դասարանում ... այդքան տաղանդներ կան, այն է, որ ես թշնամանքով եմ վերաբերվում երաժշտական ագրեսիայանը»[11]:

Բազմաթիվ վկայություններ կան Ղալամյան-մանկավարժի նվիրվածության, պահանջկոտության և կարգապահության մասին: Սակայն նրա հաջողությունը բացատրել սոսկ այս գործոններով ոչ միայն մակերեսային կլիներ, այլ ուղղակիորեն սխալ պատկերացում կտար ղալամյանական դպրոցի բուն էության մասին: Այդ դպրոցը, Ղալամյանի իսկ խոսքերով, ոչ թե ինչ-որ կարգախոսի կամ սկզբունքի վրա հիմնված քարացած դավանանք էր, այլ բազմաթիվ անփոխարինելի հատկանիշներ ներառող բարդ ու ճկուն համակարգ:

Ղալամյանի մանկավարժական ֆենոմենը հասկանալու համար առաջին հերթին պետք է հայացք գցել այն պատմական նախադրյալների վրա, որոնք նախանշում էին Ղալամյան-մանկավարժի ծնունդը:

Ղալամյանը կրթություն էր ստացել ռուսական և ֆրանսիական դպրոցների մեծանուն մանկավարժների մոտ: Նրա առաջին ուսուցիչը՝ Կոնստանտին

---

[10] **Malan R.** *Efrem Zimbalist: A Life. New Jersey, 2004, p. 262-263.*

[11] **Green E. A. H.** *Miraculous Teacher: Ivan Galamian and the Meadowmount experience, 1993, p. 128.*

Մոստրասը[12], սովորել է Բ. Սիբորի դասարանում, որն իր հերթին Լեոպոլդ Աուերի աշակերտն էր և որոշ դասեր էր ունեցել նաև Յոախիմի հետ Բեռլինում[13]: Ղալամյանը Մոստրասի առաջին աշակերտներից էր: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, 1922թ. Մոստրասը դառնում է Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր և խորհրդային ջութակի դպրոցի հիմնադիրներից մեկը[14]: Իր դասատուի՝ Սիբորի միջոցով Մոստրասը ակնհայտորեն ժառանգել էր Աուերի արժեքավոր ազդեցությունը[15]:

Լեոպոլդ Աուերի մանկավարժական ազդեցությունը քսաներորդ դարի ջութակի կատարողական արվեստի վրա անհնար է գերագնահատել: Նա ջութակի ռուսական դպրոցի հիմնադիրն էր և պատմության մեջ լեգենդար ջութակահարներից շատերի ուսուցիչը, որոնց թվում են Յաշա Հայֆեցը, Նաթան Միլշտեյնը և Միշա Էլմանը, Եֆրեմ Ցիմբալիստը և այլք: Կոնստանտին Մոստրասի և Սիբորի միջոցով Ղալամյանը ևս, փաստորեն, թեև ոչ ուղղակիորեն, □աուերական□ դպրոցի ներկայացուցիչ էր:

1922 թ. Ղալամյանը Փարիզ է գալիս, ըստ էության, որպես ուսյալ երաժիշտ: Սրա մասին է վկայում այն փաստը, որ Փարիզի կոնսերվատորիայում Ղալամյանի ուսուցիչ Լյուսիեն Կապեն ուսման սկզբից ևեթ Ղալամյանին է վստահում իր աշակերտներից մի քանիսին:

Փարիզյան ուսումնառությունը նույնպես Ղալամյանի կրթության մեջ էական դեր է խաղում: Տեխնիկական առումով այդ դերը հիմնականում աջ ձեռքի տեխնիկայի ֆրանսիական դպրոցի ուսումնառությունն էր, որը հետագայում «Ղալամյանի աղեղնային տեխնիկայի» հիմքն է դառնում: Լյուսիեն Կապեն աղեղնային տեխնիկայի մոլեռանդ նվիրյալ էր: Անսահման համբերության և ամենօրյա պարապմունքների շնորհիվ նա կատարյալ տեխնիկայի էր տիրապետում[16]:

Ղալամյանի փարիզյան կրթությունը նշանակալի էր նաև կամերային երաժշտության առումով: Կապեն հայտնի էր իր լարային քառյակով և դասավանդման մեջ մեծ տեղ էր հատկացնում կամերային երաժշտությանը: Այդ ավանդույթը գալիս էր Կապեի ուսուցչից՝ Ժ.Պ.Մորինից: Վերջինս հայտնի կամերային երաժիշտ էր և իր լարային քառյակով մեծ նպաստ ուներ Փարիզում Բեթհովենի վերջին շրջանի լարային քառյակների քարոզչության մեջ: 1861թ. Մորինի քառյակի համերգներից մեկին ներկա է գտնվում Ռիխարդ Վագները՝ համերգը բնութագրելով որպես «ամենակատարյալ»[17]: Կամերային

---

[12] Ըստ որոշ վկայությունների, մինչև Մոստրասի դասարան գալը Ղալամյանը սովորել է Գ.Կոնյուսի մոտ: Այդուհանդերձ, հիմնական կրթությունը ստացել է հենց Մոստրասի դասարանում:

[13] **Campbell M.** *The Great Violinists. New York, 1981, p. 279.*

[14] *Московская консерватория. От истоков до наших дней. 1866 – 2006, М.,, 2007, 359-360.*

[15] **Campbell M**. *նշվ. աշխ., էջ 279.*

[16] **Schwarz B.** *Great Masters of the Violin. New York, 1983, p. 371.*

[17] *Նույն տեղում, էջ 369:*

երաժշտության հանդեպ վերաբերմունքը Կապեի միջոցով փոխանցվում է և Ղալամյանին: Ղալամյանը կարծում էր, որ ցանկացած ջութակահար մենակատարի նվագացանկի հետ մեկտեղ պետք է լրջորեն սովորի նաև կամերային երաժշտության նվագացանկը[18]:

Ղալամյանի մանկավարժության ֆենոմենը, այսպիսով, ոչ թե տեղային երևույթ կամ պատահականության արդյունք էր, ինչպես կարող էր թվալ առաջին հայացքից, այլ մեծապես պայմանավորված էր ջութակի կատարողական արվեստի մանկավարժության պատմական-ժառանգական՝ վերը նշված նախադրյալներով:

Ավելին. անչափ հետաքրքիր է, որ թե՛ Մոստրասի և թե՛ Կապեի միջոցով Ղալամյանի մանկավարժության պատմական արմատները հասնում են մինչև ժամանակակից ջութակի նախահայր Ջ. Բ. Վիոտտի (Ղալամյան - Մոստրաս - Միբոր - Աուեր - Դոնտ (Յոախիմ) - Բյոմ - Ռոդե - Վիոտտի և Ղալամյան - Կապե - Մորին - Բայո - Վիոտտի)[19]:

Ղալամյանն ինքը պնդում էր, որ իր դասավանդման մեթոդները մասամբ ռուսական են, մասամբ՝ ֆրանսիական և մի մեծ մասով՝ հեղինակային[20]:

Բազմակողմանի կրթությունը, սակայն, որքան էլ հիմնարար, մեծ մանկավարժի հաջողության միակ նախապայմանը չէր: Մեծ դեր էր խաղում նաև Ղալամյանի՝ թեկուզ կարճատև, համերգային կարիերան՝ 1920-ական թվականներին: Որպես բեմի բովով անցած մարդ, նա իր աշակերտներին կարողանում էր ոչ միայն հասցնել տեխնիկական կատարելության և երաժշտական նուրբ ճաշակ հաղորդել, այլև հոգեբանորեն նախապատրաստել մեծ բեմելների:

Հաջորդ կարևոր նախապայմանը ջութակի ուսուցմանը վերաբերող գրավոր ժառանգության մանրակրկիտ ուսումնասիրությունն էր: Ղալամյանի կինը՝ Ջուդիթը, պատմում է, որ իր ամուսինը գնել էր ջութակի մասին երբևէ գրված ամեն ինչ[21]: Դասավանդման առաջին տարիներին Ղալամյանը հատուկ տետր էր պահում, որտեղ գրանցում էր իր աշակերտների առաջընթացը: Այդ գրառումները երբեմն մի քանի էջ էին գրաղեցնում[22]:

Արդեն 1936 թ., երեսուներեք տարեկան հասակում, Ղալամյանի դասավանդման մեթոդները ամբողջովին ձևավորված էին[23]: Ղալամյանի գիտելիքները ջութակի տեխնիկայի հարցում ամբողջական, կուռ կերպով համակարգված, սխեմատիկ և գիտական ճշգրտություն ունեցող մի համակարգ էին, իր իսկ խոսքերով՝ ճշգրիտ գիտություն:

Բացի վերը նշվածից, Ղալամյանի անձնական և մարդկային հատկանիշները ևս մեծապես պայմանավորում էին Ղալամյանի

---

[18] **Applebaum S.** *The Way They Play. Book 1, New Jersey, 1972, p. 340.*

[19] **Masin G.** *Violin Teaching in the New Millennium. Dublin, 2012, p. 102-105.*

[20] **Green E. A. H.**, *նշվ. աշխ. էջ 125:*

[21] *Նույն տեղում, էջ 117:*

[22] **Campbell M.**, *նշվ. աշխ. էջ 214:*

[23] **Green E. A. H.**, *նշվ. աշխ., էջ 125:*

մանկավարժության հաջողությունը: Ղալամյանը հայտնի էր իր խստությամբ, պրագմատիզմով և հետևողականությամբ, բայց, միևնույն ժամանակ, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների հոգեբանական կողմի հմուտ գիտակ էր: Նա կարևոր էր համարում աշակերտին բարոյապես աջակցելը և «չկոտրելը»: Վստահ էր, որ «երբեք չի կարելի թույլ տալ, որ զայրույթը տեղավորվի ուսուցիչ-ուսանող փոխհարաբերություններում»[24]:

Ղալամյանը բնատուր պրագմատիկ էր: Նա հասկանում էր, որ ինչքան էլ մարդու երաժշտական բնածին օժտվածությունը բացառիկ լինի, առանց գործիքի տեխնիկայի պատճաշ տիրապետման հնարավոր չէ իրականացնել երաժշտական մտահաղացումները: Նա գտնում էր, որ կրթության հատկապես վաղ շրջանում տեխնիկական կողմին ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել, քան երաժշտական կողմին, քանի որ մարդու երաժշտական զարգացումը կատարվում է ամբողջ կյանքի ընթացքում, իսկ տեխնիկական զարգացումը վաղ հասակում առավել արագ է ընթանում[25]:

1968 թ. «Թայմ» պարբերականը Ղալամյանի մասին հոդված է հրապարակում՝ այն վերնագրելով «Հիմա լաց եղիր, հետո կնվագես»[26]: Հոդվածագիրը, պատմելով Ղալամյանի խստության և պահանջկոտության մասին, նրան անվանում է «Իվան Ահեղ»: Տիկին Ղալամյանը նյույորքյան ստուդիան անվանում էր «Տանջանքի սենյակ», որտեղ ուսանողներից պահանջվում էր լարված աշխատանք և կենտրոնացում, առանց շեղումների: Սակայն այդ «տանջանքը» փոխհատուցվում էր երաժշտական և տեխնիկական մեծ առաջընթացով, ինչն աշակերտներին մեծ մղում էր տալիս:

Ղալամյանն ինքը չափազանց կարգապահ մարդ էր: Նա ամեն օր արթանանում էր առավոտյան ժամը վեցին և աշխատում էր օրը տասը ժամ՝ դասավանդելով առավոտյան 8-ից երեկոյան վեցը՝ ընդամենը մեկ ժամ ընդմիջումով: Տասժամյա այս աշխատանքային ռեժիմը Ղալամյանը պահպանեց մինչև իր 75-րդ տարեդարձը՝ միայն կյանքի վերջին տարիներին դասաժամերը պակասեցնելով և հասցնելով ութ ժամի: Նրա դասերը ծայրաստիճան կարգավորված էին և, անկախ ընթացքից, տևում էին ուղիղ 55 րոպե:

Կես դարից ավել տևած մանկավարժական գործունեության ընթացքում Ղալամյանը կրթել է անհաշիվ մեծատաղանդ ջութակահարների, որոնցից են՝ մենակատարներ Իցհակ Պերլմանը, Պինկաս Յուկերմանը, Կյուգ Վա Չունգը, Մայքլ Ռաբինը, Միրաիմ Ֆրիդը, Բերլ Սենոֆկսին, Պոլ Յուկովսկին, Գվարներիի լարային քառյակի առաջին ջութակահար Առնոլդ Շտայնհարդտը, Նյու Յորքի ֆիլհարմոնիկի կոնցերտմայստեր Դեյվիդ Նեդիենը և այլք:

Ղալամյանի՝ ջութակի մեթոդները ամփոփող գրավոր ժառանգությունը՝ «Ջութակ նվագելու և դասավանդելու սկզբունքները» համարվում է ջութակի

---

[24] Նույն տեղում, էջ 93:

[25] Galamian I. *Principles of Violin Playing and Teaching, New York, 2013, p. 106-107.*

[26] *Time, Dec. 06, 1968, Violinists: Cry Now, Play Later.*

վերաբերյալ նմանատիպ գրականության ամենածանրակշիռ աշխատություններից մեկը:

Հետաքրքիր է գիրքը գրելու նախապատմությունը: Ղալամյանի բազմաթիվ աշակերտները տարիներ շարունակ խնդրում էին, որ մեծ վարպետը հետագա սերունդների համար թղթին հանձնի իր թանկարժեք խորհուրդները: Նրանցից ամենահետևողականը Էլիզաբեթ Գրինն էր, որը Ղալամյանի հետ ծանոթացել էր 1947թ.: Այդ տարվա ամռանը Գրինի տաղանդավոր աշակերտներից մեկը՝ Չարլզ Ավշարյանը (հետագայում դառնում է Ղալամյանի ասիստենտը), ընդունվում է «Մեդոումաունթ»: Ամառվա վերջին՝ Ավշարյանի՝ դպրոցից վերադառնալուց հետո, Գրինը նամակ է գրում Ղալամյանին. «Իմ ուղարկած աշակերտը մեկ տարի հետո կավարտի դպրոցը: Ձեզ մոտ սովորելուց հետո նրա համար ծիծաղելի է ինձ մոտ վերադառնալը: Եթե դուք ինձ կարողանայիք դասավանդել երկու շաբաթ, դա ինձ հնարավորություն կտար չխափանել այն ամենը, ինչ նա սովորել է ձեզնից»[27]:

Մեկ շաբաթ անց ստացվում է Ղալամյանի դրական պատասխանը: Գրինը երկու «ցնցող» դաս է պարապում Ղալամյանի հետ, որտեղ վերջինս Գրինին ներկայացնում է ջութակի հիմնարար տեխնիկային վերաբերող՝ իր դասավանդման հիմնական սկզբունքներն ու մեթոդները: Մեկ տարի անց արդեն Գրինը սովորում էր Ղալամյանի դասարանում: Այդ ժամանակ նա մտածում է, որ Ղալամյանի նման հռչակավոր ուսուցիչը երբեք չպետք է սոսկ լեգենդ դառնա: Նա պետք է իր դասավանդումը հասանելի դարձնի իրենից հետո եկողների համար[28]: Եվ Ղալամյանին առաջարկում է գրի առնել իր կարևոր խորհուրդները:

Միակ խնդիրը Ղալամյանի ծայրահեղ զբաղվածությունն էր: Ղալամյանը միաժամանակ պարապում էր հարյուրից ավելի աշակերտների հետ: Նրա դասավանդման գրաֆիկը բաղկացած էր օրական տասը ժամից՝ ներառյալ շաբաթ և կիրակի օրերը, ամբողջ տարին: Սակայն Գրինը այնքան խանդավառված էր գրքի գաղափարով, որ Ղալամյանին առաջարկում է յուրաքանչյուր ամառ ընդամենը մեկ ժամ իրեն թելադրել այդ մեթոդները:

Հետագա ութ տարիներին, մինչև 1957 թ., Ղալամյանը ամեն ամառ իր մեթոդները թելադրում է Գրինին: Ջութակահար, երաժշտագետ և խմբավար Ֆրեդերիկ (Ֆրից) Նոյմանը, 1958 թ. ամռանը այցելելով Մեդոումաունթ, զգալի աշխատանք է կատարում գրքի գրավոր տեքստը մշակելու գործում: 1966 և 1977թթ., Նոյմանի և Ղալամյանի համահեղինակությամբ լույս է տեսնում նաև «Ջութակի ժամանակակից տեխնիկան» երկհատոր գիրքը, որը պարունակում է միաձայն և բազմաձայն գամմաների, արպեջոների, վարժությունների, ինչպես նաև ռիթմի և շտրիխների բազմաթիվ օրինակներ: Այն կոչված է լրացնելու «Ջութակ նվագելու և դասավանդելու սկզբունքները»՝ որպես արծարծված հիմնականում տեսական դրույթների գործնական վարժություններ: 1962 թ., գրքի մտահղացումից 12 տարի անց, Prentice-Hall

---

[27] **Green E. A. H.,** *նշվ. աշխ, էջ 105:*

[28] *Նույն տեղում:*

հրատարակչությունը լույս է ընծայում «Ջութակ նվագելու և դասավանդելու սկզբունքները»:

Ղալամյանի գրքի արժեքը պայմանավորված է մի շարք գործոններով: Այն, ինչպես հուշում է վերնագիրը, ուղղված է ոչ միայն ուսանող ջութակահարներին, այլև առավելապես՝ մանկավարժներին: Հեղինակը կենտրոնանում է միայն էականի վրա և մանրամասնում տեխնիկական սկզբունքների գործնական կողմը՝ առավելագույնս օգտակար դարձնելով գիրքը: Աշխատության պատմական և գործնական արժեքը պայմանավորված է նրա մեթոդների բնագիտական հիմքով: Ջութակի տեխնիկայի ցանկացած պարզաբանում կամ դրույթ պատճառաբանվում և բացատրվում է ըստ գործիքային և բնագիտական օրենքների: Համառոտ լինելով հանդերձ՝ □Սկզբունքները□ աչքի է ընկնում բացառիկ տարողունակությամբ: Այնպիսի հարցեր, ինչպիսիք են ակուստիկ օրենքները, մարմնի դիրքը, պարապելու արդյունավետությունը կամ ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները, հավասարաչափ հետևողականությամբ քննվում են զուտ գործիքային հիմնախնդիրների քննությունների հետ: Իսկ արդյունավետ պարապելու խնդրին Ղալամյանը առանձին գլուխ է նվիրում:

«Սկզբունքների» հատկանշական արժանիքներից մեկն այն է, որ տեխնիկական խնդիրները բացատրվում են ջութակի նվագացանկի առանձնապես հաճախ կատարվող ստեղծագործությունների օրինակներով: Այսպես, օրինակ, խոսելով ձախ ձեռքի մատների երկու տարբեր դիրքերի մասին՝ Ղալամյանը երկու դեպքում էլ ջութակի նվագացանկից բերում է կիրառության տիպիկ օրինակներ, առաջինը՝ Լալոյի «Իսպանական սիմֆոնիայից», երկրորդը՝ Բախի երկրորդ պարտիտից: Բնորոշ օրինակների միջոցով հարկ եղած դեպքում լուսաբանվում են տեխնիկական հմտությունների (օրինակ, աղեղնային շտրիխների) գեղարվեստական կիրառությունները: Ձեռքերի դիրքերի մասին խոսելիս տրվում են բազմաթիվ պարզաբանող նկարներ:

«Ջութակի տեխնիկայի ուսուցումը այլևս առեղծված չէ: Այն այժմ ճշգրիտ գիտություն է»[29]: Ղալամյանի այս պնդումը լավագույնս է բնութագրում գիրքը: Գիտությունը կարևորելով հանդերձ՝ երաժիշտը գիտակցում էր, որ ջութակի տեխնիկան ոչ թե ինքնանպատակ է, այլ կոչված է ծառայելու արվեստին: Գրքի նախաբանում նա գրում է. «Մեկնաբանությունը գործիք սովորելու բարձրագույն նպատակն է, նրա գոյության միակ արդարացումը»[30]: Հրատարակման օրվանից առ այսօր Ղալամյանի «Սկզբունքները» աշխարհի ամենամեծ տարածումն ունեցող գրքերից է: Դա են վկայում նրա բազմաթիվ թարգմանությունները աշխարհի տասնյակ լեզուներով:

---

[29] Նույն տեղում, էջ 141:

[30] **Galamian I.,** նշվ. աշխ., էջ 6:

ПЕДАГОГИКА ИВАНА ГАЛАМЯНА И ЕГО “ ПРИНЦИПЫ СКРИПИЧНОГО ИСПОЛНИТЕЛЬСТВА И ПРЕПОДАВАНИЯ”

САРГСЯН Н.М.

Резюме

Иван Галамян является одним из выдающихся педагогов в истории скрипичного исполнительского искусства.

И. Галамян родился в Тебризе, а впоследствии переехал в Россию, где обучался у основателя советской школы скрипичного искусства Константина Мостраса. С 1919 года Галамян работал в оркестре Большого театра. В 1922 году ему пришлось переехать в Париж, где он продолжил обучение у великого педагога Люсиена Капе, известного в первую очередь своей техникой смычка. После непродолжительной сольной концертной деятельности Галамян полностью посвятил себя педагогической практике, и вскоре его имя стало известным во всей Европе. С 1937 года Галамян продолжил свою педагогическую работу в США, где в 1944 году поступил на работу в Кертисовский институт искусств, а в 1946 г. – в Джульярдовскую школу. В 1944 году в сельской местности неподал¸ку от Нью-Йорка Галамян основал летнюю музыкальную школу Медоумаунт, которая стала Меккой для скрипачей со всего мира.

И. Галамян разработал собственную методику преподавания, которая была изложена им в книге “Принципы скрипичного исполнительства и преподавания”. Книга была издана в 1962 году по настоятельной просьбе его учеников и благодаря деятельному участию Элизабет Грин и Фредерика Ноймана. Она охватывает полноценный пласт материалов по методике преподавания и технике исполнения.

Впоследствии, в 1966 и 1977 годах Галамяном и Нойманом был издан двухтомник упражнений “Современная техника скрипки”.

IVAN GALAMIAN'S PEDAGOGY AND HIS PRINCIPLES OF VIOLIN PLAYING AND TEACHING

N. SARGSYAN

Abstract

Ivan Galamian is one of the most prominent educators in the entire history of violin performing arts. He is the founder of the new school of violin pedagogy and one of the most successful pedagogues in history. Among his most famous students are Itzhak Perlman, Pinchas Zukerman, Kyung-wha Chung, Michael Rabin, and others.

Ivan Galamian's "Principles of Violin Playing and Teaching" is considered one of the most popular books about violin methods. The book was published in 1962 prompted by a number of Galamian's students and with active intervention of Elizabeth Green and Frederick Neumann. Despite its small volume, the book covers quite a vast range of material on violin playing and teaching techniques. It is designed not only for violinists but also for teachers. Later, in 1966 and 1977, two volumes of exercises by Neumann and Galamian titled "Contemporary Violin Technique" were also published.